հաստատեցի մուտք նոցա անդր, և բնակեցին. և աղաթեցին անդ ըստ վաղեմի սովորութեան իւրեանց. 'ի բաց մերժեցի զազգն Վրաց եւ այլք՝ 'ի տեղւոջէն յայնմանէ. արգելեալք անթերի եւ կատարեալ. մի հակառակեցին վասն այնր 'ի պատճառս որ և իցէ. և մնացէք 'ի ձեռս Հայոց յաւիտեանս յաւիտենից. զցայգ և զցերեկ, 'ի տարիս և յամիս, 'ի դարս եւ 'ի ժամանակս. առեալ 'ի ձեռաց նոցա տուք առ մեծ եպիսկոպոսն Հայոց և միաբանութեան նորին մնալ 'ի ձեռս նոցա, և գրեսջիք յետկար 'ի դատարանի 'ի վերայ նոցա. զի մի' միւսանգամ հակառակեցին վասն Գողգոթայի և պահարանաց նորին, և կռուեցին ընդ միմեանս վասն այնր։ Անդորձադրելի մնացին թղթեանքն, որք միանգամ գրեցան ատի յաղագս Վրաց. խափանեցին վճիռք և զօրութիւնք նոցա, եւ ջնջեցին պատճէնք նոցին յարձանագրութենէ։ Եւ իւրաքանչիւր ազգ բնակեցի 'ի տեղւոջ իւրում, ըստ վաղեմի սովորութեան իւրեանց. առանց հակառակութեան եւ խռովութեան, որպէս տրամադրեն բանք հրովարտակիս։

Եւ մինչդեռ կային Հայք յատենի մերում. հարցումն եղեւ նոցա, եւ նոքա մատուցին զհրովարտակս և զդաշնագիրս տուեալ յառաջին թագաւորաց, 'ի Մէհէմմէտ Նասրէ որդւոյ Ղալաւունի և յայլոց. զհանրագիրս, և ըզվճիռս դէնպէտին։ Արդ՝ հաւատացեն հրովարտակիս, և ըստ պահանջման սորա գործեցեն, եւ հաւատարմացի թագաւորական Խաթթի Շէրիֆս։ Գրեցաւ հրովարտակս յատենի արդարութեան Եգիպտոսի. 'ի ՀԳ Ռէպիլ ախր ամսոյ՝ Ռ•Հ (1399)։

Զթերի հրովարտակս վասն այսր խնդրոյ. Տե՛ Գը-Ի ԼԱ. Եր՝ 216։

Յետ այնորիկ կազմեցաւ ժողով մեծ 'ի դատարանի յայլազգեաց և 'ի քրիստոնէից. և ընթերցաւ դատաւորն առաջի նոցա զհրովարտակն, և գրեալ յետկար ետ ցՄարտիրոս եպիսկոպոս։ Սակայն շփոթութիւն եւ տարբերութիւն մեծ երեւի 'ի մէջ թուականաց, իբրեւ ամս քառասուն. զի թուական հրովարտակին կրէ Ռ•Հ որպէս եդաք, իսկ յետկար դատարանի ՌՀՀ, որպէս ունիմք դնել 'ի ընտրեալ. յորմէ յայտ է թէ գիր դատարանի հիմնեալ է